ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

01 մարտի 2013 թվականի N 53-Ա

ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 50-րդ և 145-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 21-ի N 54-Ա որոշումը՝ *որոշում եմ.*

1. Նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս և Նոր Հաճն համայնքների ղեկավարների հերթական ընտրություններ՝ 2013 թվականի մայիսի 26-ին:

2.Առաջարկել թիվ 26 և 27 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին՝ հայտարարել ընտրության օր, սահմանված կարգով կազմակերպել ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումներ:

3. Առաջարկել Նուռնուս և Նոր Հաճն համայնքների ղեկավարներին՝ ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի համաձայն իրականացնել համայնքի ղեկավարին վերապահված լիազորությունները:

4. Տեղեկացնել Նուռնուս և Նոր Հաճն համայնքների նորընտիր ղեկավարներին, որ լիազորությունները պետք է ստանձնեն համայնքի նախորդ ղեկավարի լիազորությունների ավարտման հաջորդ օրը, այն ամրագրելով իրենց որոշմամբ:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ս. Հակոբյանի վրա:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ